ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար պլաստիկ քարտերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 20.01.2023թ. N 20/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.02.2023թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Մկրտչյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Կ.Գևորգյանը, Ն.Հազոյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Մկրտչյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և համակարգի միջոցով ծանուցել էր «79 գրուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

-«79 գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունները և համակարգի միջոցով ներկայացրել է շտկված տարբերակը (կցվում է):

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «79 գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ «79 գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2023 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը՝ «79 գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3" ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/1 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «79 գրուպ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «79 գրուպ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Մկրտչյան

Անդամներ՝ Կ.Գևորգյան

Ն.Հազոյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան